# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 39-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 39. Ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովության պետական երաշխիքները**

1. Ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքին համապատասխան, իսկ ոստիկանության գվարդիայի ծառայողների սոցիալական ապահովության հարցերը՝ նաև զինծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Ոստիկանության ծառայողները կարող են բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով օգտվել մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից: Ոստիկանության ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու կարգը և պայմանները սահմանում է Կառավարությունը:

3. Ոստիկանության ծառայողները կարող են ապահովվել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության այլ երաշխիքներով:»:

***Հոդված 2.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 1-ին հոդվածով «Ոստիկանության մասին» օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 39-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 39. Ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովության պետական երաշխիքները**

1. Ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքին համապատասխան, **իսկ ոստիկանության գվարդիայի ծառայողների սոցիալական ապահովության հարցերը՝ նաև զինծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան,** բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Ոստիկանության ծառայողները կարող են բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով օգտվել մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից: Ոստիկանության ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու կարգը և պայմանները սահմանում է Կառավարությունը:

3. Ոստիկանության ծառայողները կարող են ապահովվել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության այլ երաշխիքներով:»:

***Հոդված 2.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 1-ին հոդվածով «Ոստիկանության մասին» օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1324-20.04.2026-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | **ՀՀ կառավարություն** | «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի **նախագծի 1-ին հոդվածով** «Ոստիկանության մասին» օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 1-ին մաս | «Ոստիկանության մասին» գործող օրենի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության գվարդիայի ծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են ոչ միայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով, այլ նաև՝ զինծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերով: Մինչդեռ, ներկայացված նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող ձևակերպմամբ վերացվում է այլ նորմատիվ իրավական ակտերի կիրառելիության վերաբերյալ ուղղակի հղումը, և կարգավորումը սահմանափակվում է միայն վերոնշյալ օրենքով՝ դրանով | **Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան լրացումը: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իսկ սահմանափակելով ոստիկանության գվարդիայի ծառայողների առկա սոցիալական երաշխիքների շրջանակը և, հետևաբար, վատթարացնելով նրանց սոցիալական դրությունը:<br>Ըստ այդմ՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 1-ին մասում «համապատասխան,» բառից հետո լրացնել «իսկ ոստիկանության գվարդիայի ծառայողների սոցիալական ապահովության հարցերը՝ նաև զինծառայողների սոցիալական ապահովության հարցերը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան,» բառերը: | | |